

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

ուկտոբրի 29. 12. 2017թ. թիվ 1103/Կ հրամանի



ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 9, 28. 12. 2017թ.

Փոփոխվել է՝

Արձանագրություն թիվ 2, 27. 02. 2020թ.

Առ 11. 03. 2020թ. փոփոխություններով

Արձանագրություն թիվ 7, 27. 01. 2022թ.

Առ 02. 02. 2022թ. փոփոխություններով

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ


1. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում (այսուհետ՝ Համալսարան) դպրոցականների օլիմպիադաների անցկացման կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) սահմանում է դպրոցականների օլիմպիադաների (այսուհետ՝ օլիմպիադա կամ օլիմպիադաներ) անցկացման նպատակները և խնդիրները, կազմակերպչական-մեթոդական ապահովումը, անցկացման և ֆինանսավորման կարգը, դպրոցականների մասնակցությունը և հաղթողներին ու մրցանակակիրներին որոշելու կարգը:

II. ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԳՆԵՐԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

2. Օլիմպիադաների անցկացման հիմնական նպատակներն են.
 - նպաստել տաղանդավոր, շնորհալի և ստեղծագործական կարողություններով օժտված աշակերտների հայտնաբերմանը և նրանց մասնագիտության ճիշտ ընտրությանը:
 - խթանել աշակերտների ստեղծագործական աշխատանքի, վերլուծական քննադատական մտածողության ձևավորմանը:
3. Օլիմպիադաների անցկացման հիմնական խնդիրներն են.
 - զարգացնել աշակերտների հետաքրքրությունները հանրակրթական առարկաների նկատմամբ, նպաստել կայուն գիտելիքների ձեռքբերմանը,
 - բացահայտել և խթանել հետաքրքրությունը գիտահետազոտական գործունեության նկատմամբ
 - օժտված երեխաների հայտնաբերումը և օժանդակումը:

III. ՕԼԻՄՊԻԱԴԱՆՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

4. Համալսարանում կազմակերպվող օլիմպիադաներին կարող են մասնակցել ավագ դպրոցների ու վարժարանների 10-12-րդ դասարանների սովորողները:
5. Օլիմպիադաներ կարող են անցկացվել նաև արտագնա:
6. Օլիմպիադան անցկացվում է հանրակրթական առարկաներից:
7. Համալսարանի օլիմպիադան անցկացվում է՝ օլիմպիադաների առարկայական հանձնաժողովների կողմից հանրակրթական ծրագրերի հիման վրա մշակված առաջադրանքներով:
8. Գնահատումը կատարվում է 20-միավորանոց սանդղակով, որտեղ անհրաժեշտության պահպանելով տասնորդական միավորներով գնահատելու կարգը:



9. Առաջադրանքների կատարման համար սահմանված ժամանակը 150 րոպե է:

IV. ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

10. Օլիմպիադայի անցկացումը ֆինանսավորվում է Համալսարանի բյուջեից: Տրամադրվող միջոցները նախատեսված են անհրաժեշտ նյութերի ձեռքբերման և հաղթողների պարգևատրման համար:

V. ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԸՆԹԱՑՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

11. Դպրոցականների առարկայական օլիմպիադան անցկացվում է մեկ փուլով, մարտ-ապրիլ ամիսներին:
12. Համալսարանը տեղեկատվական նամակ է ուղարկում դպրոցների տնօրեններին օլիմպիադայի անցկացման օրվանից առնվազն մեկ ամիս առաջ:
13. Աշակերտների մասնակցության հայտերը ընդունվում են մինչև տեղեկատվական նամակում նշված հայտագրման նախավերջին օրը (տես հավելված):
14. Դպրոցներից ստացված հայտերի հիման վրա կազմվում են աշակերտների ցուցակները՝ ըստ առարկաների և դասարանների:
15. Օլիմպիադայի մասնակիցները գրանցվելու համար ներկայանում են Համալսարան օլիմպիադան սկսվելու՞ ժամից կես ժամ առաջ:
16. Օլիմպիադայի առաջադրանքները ստուգվում են օլիմպիադան ավարտվելուց հետո՝ առնվազն երկու օրվա ընթացքում:
17. Օլիմպիադայի արդյունքները հայտարարվում են օլիմպիադայի ավարտից հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում և տեղադրվում են Համալսարանի կայքում:
18. Օլիմպիադայի մասնակիցների աշխատանքները պահպանվում են Համալսարանի գիտահետազոտական աշխատանքների, նորարարությունների և համագործակցության բաժնում 5 տարի ժամանակով, որից հետո ակտավորվում են և ոչնչացվում:

VI. ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱԳԸ

19. Օլիմպիադայի հաղթողներ են ճանաչվում այն մասնակիցները, որոնք հավաքել են՝
 - 1) 20-19 միավոր՝ 1-ին տեղ,
 - 2) 18 միավոր՝ 2-րդ տեղ,
 - 3) 17 միավոր՝ 3-րդ տեղ:
20. Օլիմպիադայի հաղթողներին հանձնվում են առաջին, երկրորդ, երրորդ կարգի դիպլոմներ:



21. Առաջին մրցանակային տեղը գրաված մասնակցին Համալսարանի ուսուցման վճարովի համակարգ ընդունվելու դեպքում հնարավորություն է տրվում օգտվելու ուսման վճարի մասնակի փոխհատուցումից :
22. Ձեռչեր տրամադրվում են մեկ տարվա իրավունքով՝ առաջին կուրսի երկրորդ և երկրորդ կուրսի առաջին կիսամյակներում:
23. Ձեռչերից կարող են օգտվել տվյալ ուսումնական տարվա 12-րդ դասարանի շրջանավարտները:
24. Օլիմպիադայի մասնակիցներին շնորհակալագրեր և խրախուսական մրցանակներ տրվում են հանձնաժողովի որոշմամբ:
25. Հանձնաժողովի որոշմամբ շնորհակալագրեր կարող են տրվել նաև այն մասնակիցներին, որոնք տվյալ առարկայից հավաքել են ոչ մրցանակային, բայց ամենաբարձր միավորները:
26. Օլիմպիադայի ընդհանուր ղեկավարությունը իրականացվում է Համալսարանի գիտահետազոտական աշխատանքների, նորարարությունների և համագործակցության բաժնի կողմից:

VII. ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՕԼԻՄՊԻԱԴԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

27. Օլիմպիադայի անցկացման օրվանից առնվազն 30 օր առաջ Համալսարանի գիտահետազոտական աշխատանքների, նորարարությունների և համագործակցության բաժնի ղեկավարի կամ գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի ստորագրությամբ ամբիոններին՝ ուղարկվում է տեղեկատվական գրություն՝ օլիմպիադայի անցկացման մասին:
28. Օլիմպիադայի մեթոդական ապահովման նպատակով ամբիոնների վարիչների առաջադրմամբ մեկ շաբաթվա ընթացքում կազմակերպվում են առարկայական հանձնաժողովներ և ներկայացվում են ռեկտորի հաստատմանը:
Առարկայական հանձնաժողովի գործունեությունը իրականացվում է համաձայն սույն Կանոնակարգի:
29. Առարկայական հանձնաժողովը կազմում է առաջադրանքների փաթեթը, վերահսկում է օլիմպիադայի ընթացքը, գնահատում է առաջադրանքների կատարումը, լուծում է օլիմպիադայի ընթացքում առաջացող խնդիրները:
30. Առաջացած խնդիրների լուծման համար արդյունքների հրապարակումից հետո՝ երկու օրվա ընթացքում մասնակիցը կարող է դիմել գիտահետազոտական աշխատանքների,



նորարարությունների և համագործակցության բաժին և պարզաբանումներ ստանալ առարկայական հանձնաժողովի նախագահի կողմից:

31. Յուրաքանչյուր առարկայից ամբիոնը տրամադրում է առաջադրանքների փաթեթ.

- 12-րդ դասարանի առարկաների համար՝ առնվազն 3 տարբերակ,

- 10-րդ, 11-րդ դասարանների առարկաների համար՝ առնվազն 2 տարբերակ:

32. Ամբիոններն օլիմպիադայի անցկացման օրվանից 10 օր առաջ Համալսարանի գիտահետազոտական աշխատանքների, նորարարությունների և համագործակցության բաժին ներկայացնում են առաջադրանքների տարբերակները, պատասխանների ձևաթղթերը, ինչպես նաև դրանց էլեկտրոնային տարբերակները:

33. Առաջադրանքներն անհամապատասխան ձևով կազմելու, ներկայացնելու և ներկայացման ժամկետները խախտելու դեպքում տվյալ առարկայից օլիմպիադա չի անցկացվում:



Առարկայական օլիմպիադայի մասնակիցների հայտերի լրացման աղյուսակ

	Ազգանուն, անուն, հայրանուն	դպրոց	դասարան	առարկա	հեռախոսահամար
1					
2					
3					

